

և զաղէրեկ ծաղկեալ մօրուսն ոսկեփունջ  
կազմեալ > ոսկի փոշով, «որ իջանէր  
մինչեւ ցգրապանս զգիատու նորա», հիա-  
ցաւ մնաց ու մեծարեց զայն շրով։

Հոնի նստող Սարգիս կաթողիկոսի մա-  
սին կը կարդանք՝ թէ էր նոյնպէս «այր  
սուրբ և հրաշափառ տեսլեամբ»։ Հրա-  
պուրիչ էր Շնորհաւոյն եղբայրը Գրիգո-  
րիս, «քարձրահասակ և գեղեցկատեսիլ և  
բարուցն խնարից»։ Եւ երբ լատինաց  
հրափոռվ յերուսաղէմ զնաց անոնց ժո-  
ղովին, պատկառանց մ'ազդեց անոնց վը-  
րայ, որ «ըստ վայելչազգեաց և պատ-  
շաճափեր տեսիլ մարտոյն՝ ծանեան և  
զնուոյն գեղեցկութիւն»։ կ'ըսէ Այսմ.  
Անեցին՝ Ալեքը վեռութիւն մ'ունէր Գրի-  
գոր Տղայ, «այս սկայածեւ և ահարկու  
տեսլեամբ, զուարթերս և պատասիրս,  
մի իմաստութեամբ և զիտութեամբ և աս-  
տուածային չնորիօց, հանճարեղ և իմաս-  
տուն ի խօսն և ի դարձուածն բանից»։  
1174ի յիշատակազիր մ'ալ կը յիշէ անոր  
«զլաւութիւն բարուց և զկորովութիւն  
մուաց... մանաւանդ զեղեցկագունութիւն  
կերպարանին բնաւին մարմնոյն»։ Եւ անոր  
անունն «ըսդ ոլորտս տիեզերաց հոչա-  
կեալ եղեւ։ մինչ զի այլասեռց հեռարը-  
նակըն ընթացեալ մեծապարզեւ ընթայիւր  
ի տեսիլն չընազ և զարմանալի, որ տե-  
սանէրն պշնոյր և երթեալ համբաւէր,

և որ լսէրն՝ բորբոքէր առաւել»։ Անոր  
յաջորդը Գր. Քարավիժմ իւր մատաղու-  
թեան մէջ էր նոյնպէս «հասակաւ գեղեցիկ  
և բարիոր տեսանելով», կըսէ պատմէց։  
Եւ բոլոր նկարագրութեանցդ մէջ կը շեշ-  
տուի հասակին բարձրութիւնը, որ ան-  
տիական կաթողիկոսաց վրայ կը մեղմէր  
չափով մը տարիներու թերութեան անա-  
նորդ ազեցութիւնը։

Այս արտօրացին զեղը հաճելի՝ բայց ան-  
հրաժեշտ չէր անշուշտ, բարյական մեծա-  
գոյն արժանիքն անտեսել կու տար եր-  
բեմն առերեւոյթ անշրջութիւնն իսկ։ Սո-  
զոմն ծերութեան հետ նաեւ «յանհարին  
ճգնուական վարուց յոյժ անաւագեալ»  
էր երբ հայրապետութեան տարուեցաւ։  
Եւ Շնորհալին իւր երկարակեաց հարա-  
զատին հետ՝ որոյ զեղով ալ թերեւս  
զարգարուած էր՝ տարիներու ծան-  
րութեան տակ ընկճուած, հիծած, և  
«ոչինչ նուազ և մեր նովին տկարութեամբ  
զգածեալ եմք», կ'ըսէ՝ անոր յաջորդե-  
լու պահուն։ այնպէս որ հազիւ եօթ տարի  
հովուեց ու վախճանեցաւ։

(Տարօւթակելի)

Հ. Վ. ՀաՅՈՒՆԻ

1. Յ. Կր. 129-31. — 2. Ուս. 253. — 3. Նոյն. 412. — 4. Շնորհ. և պրզ. 157. — 5. Տարեգիր կիկե. սիր. — 6. Հայոց. յուկ. — 7. կիրակ. 69. — 8. Յ. Կր. 141. — 9. Շնորհ. նամակ. 13.

## Մ Ա Յ Ի Ս Ն Ե Կ Ա Ր Ա Գ Ա Յ Ց

Գարնան արէէն, թարմ թարմ սիրքեէն  
Հոգիս կը հրճուի, կը լենայ թեանդով,  
խոնէր անհամար կարծես թէ կ'առնեն,  
կը թորին հետուն, ազատ անվագով։...

Կը թորին այնպէս զուարթ երգեցիկ。  
Կ'երթան, կը գտննեն ներջնութեարու  
Ակունքը տրատում, ու մէկիկ մէկիկ  
կեանքի կը թերին ապրութերս անյոյս։...

Կը բերեն... ծաղկուն մարմանդին վըրայ,  
Ու զաղը բոյթերով մեղմիւ կը լըւան  
Ծալթերը թափուն վիշտերու անձայն

ինձ կու տան կազդոյր. նոր յոյզեր՝ ընծայ,  
Ու նուրբ սարսուներ։ Սաղարթներուն վրայ  
Նորիթներ կ'երգեն. «Մայրն է կու զայ...»։